Հայաստան համահայկական հիմնադրամ
գործադիր վարչություն
Hayastan All-Armenian Fund
Executive Board

ՀՀ, Եր–ան 0010, Կառավարական 3-րդ մասնաշենք,
«Հայաստան» համահայկական հիմնադրամ
Հասարակայնության հետ կապերի բաժին
Հեռ: + (374 10) 521505
pr@himnadram.org
www.himnadram.org

Մամլո հաղորդագրություն

Ֆրանսահայերի միասնական ջանքերով Արցախի 3 գյուղերում կառուցվում են համայնքային կենտրոններ

Երեւան, 18 հունիսի, 2015թ.: «Հայաստան» համահայկական հիմնադրամի Ֆրանսիայի տեղական մարմնի հովանավորությամբ Լեռնային Ղարաբաղի Կյուրաթաղ /Հադրութի շրջան/, Գետավան /Մարտակերտի շրջան/ եւ Սարգսաշեն /Մարտունու շրջան/ գյուղերում մեկնարկել են համայնքային կենտրոնների կառուցման աշխատանքները: Ծրագրերը համաֆինանսավորվում են ԼՂՀ կառավարության կողմից:

Այս համայնքների բնակիչները՝ շուրջ 1030 մարդ, հիմնականում զբաղվում են հողագործությամբ եւ անասնապահությամբ: Մեկ հարկի տակ բուժկետի, գրադարանի, հանդիսասրահի ու գյուղապետարանի կենտրոնացումը նպատակ ունի արդյունավետ դարձնել այս ենթակառուցվածքների շահագործումն ու տնտեսվարումը: Ծնորհակալություն հայտնելով Ֆրանսիայի մեր հայրենակիցներին՝ համայնքների ղեկավարները հավաստում են, որ այս ձեռնարկն արդեն իսկ ոգեւորել է բնակիչներին:

«Մեր նախաձեռնություններով հայ գյուղացուն սատարելը, լինի դա Հայաստանում, թե Արցախում, մեր հիմնական ուղղությունն է եւ առաջնահերթությունը»,- ասում է «Հայաստան» հիմնադրամի գործադիր տնօրեն Արա Վարդանյանը:

«Հայաստան» համահայկական հիմնադրամը շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որը հիմնվել է 1992թ. մարտի 3-ին՝ Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղում բարեսիրական օգնության եւ ենթակառուցվածքների զարգացման նպատակով: Այն աշխարհում ներկայանում է իր 25 գրասենյակներով: